

## ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

### ՀԱԼԷՊԻ ԳԱՆՁԱՏԱՆ ՍՐԲԱԶԱՆ ՄԱՍՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՄԱՄՆԱՏՈՒՓԵՐԸ (Բ)<sup>1</sup>

ՎԱՐԴԻ ՔԷՇԻՇԵԱՆ

Հալէպի Զարեհեան Գանձատան մէջ ծիսական առարկաներու շարքին լայն տեղ կը զբաղեցնեն Հայ եկեղեցւոյ նիւթական մշակոյթի այն իրերը, որոնք ծիսական արարողութիւններու ընթացքին մասնաւոր եւ օժանդակ դեր չունին եւ զուտ յարգարանքային նշանակութեան առարկաներ են: Այս խումբին կը պատկանին մասանց պահարանները, որոնք առաւելաբար Ս. Սեղանի համար պատրաստուած յարգարանքի զարդեր են, որոնք մասունքի լրացումներով ստացած են պաշտամունքային նշանակութիւն:

Այս մասանց պահարանները ընդհանրապէս արծաթեայ եւ ոսկեզօծ, տարբեր չափի եւ ձեւի ոսկերչական արուեստի գանազանութիւն մը ներկայացնող սեղանի զարդախաչեր, ճաճանչներ են: Հայկական արծաթագործութեան այս գոհարները կ'առանձնանան ձեւի եւ բովանդակութեան ուրոյն յատկանիչներով եւ գեղարուեստական ինքնատիպ լուծումներով:

Բնականաբար, գործնականօրէն անհնար է պարզել, թէ ճաճանչակերպ զարդերն ու խաչաձեւ մասնատուփերը իբրեւ քրիստոնէական առարկաներ ե՞րբ մուտք գործած են Հայ եկեղեցական մշակոյթի գանձարան, սակայն յստակ է որ ճաճանչակերպ զարդերը պէտք է դիտել ընդհանրապէս եկեղեցական մշակոյթի եւ մասնաւորաբար մասունքարաններու պատրաստման ու ձեւաւորման ընթացքին մէջ, ուստի անոնց արմատները պէտք է որոնել նախ եւ առաջ համաքրիստոնէական փոխազդեցութիւններու ակունքներուն մէջ:

Կրօնա-ծիսական առարկաներու պատրաստումը հրաշալիօրէն իւրացուած եւ ընդհանրացած է Հայ աւանդական արծաթագործութեան մէջ: Ստեղծագործ Հայ վարպետները կերտած են նիւթական մշակոյթի անգուգական արժէքներ, որական նոր աստիճանի հասցնելով եկեղեցական զարդարուեստը: Մասնախաչերու եւ խորանի զարդերու այս խումբը՝ ինչպէս մասնատուփերու միւս օրինակները, անմիջականօրէն կ'առնչուին սուրբերու մասունքներուն եւ սրբազան առարկաներուն, եւ որպէս այդպիսիք մշտապէս վայելած են հաւատացեալներու ջերմեռանդ ակնածանքը: Եթէ աջերու եւ արկղիկներու նախատիպերը կը համարուին մասունքարաններու հնագոյն օրինակները եւ կ'առնչուին քրիստոնէութեան տարածման հին դարերուն, ապա՝ ճաճանչակերպ կամ խաչաձեւ մասնատուփերու աւանդոյթը աւելի ուշ ժամանակներու երեւոյթ է: Եկեղեցական հանդիսաւոր առիթներուն ճաճանչաւոր խաչերը, խորանազարդերը Ս. Սեղանի կարեւորագոյն զարդը կը կազմեն:

#### 14. Ճաճանչազարդ՝ մասունքով

Հալէպի արծաթագործութեան իւրայատուկ նմոյշներէն է 1792ին Հալէպ պատրաստուած (թիւ 448) մասունք պարունակող արծաթեայ, ոսկեզօծ ճա-

ճանչազարդը (երկայնքը՝ 43, լայնքը՝ 20 սմ.): Նմոշը եկեղեցական ավանդական ձևերուն հարազատութեան հետ, կը դրսևորէ նաեւ զայն ստեղծող վարպետին գեղագիտական ճաշակին եւ հայեցողութեան դրոշմը, որ ի յայտ կը բերէ ճաճանչազարդերու ավանդական ձևերու եւ տեղական արհեստագործութեան բնորոշ տարրերու զուգորդում մը: Պատրաստուած է ձուլման, դրուագման ու դրոշմումի արուեստով, փորագրական յաւելումներով եւ ունի Հայկազի դպրոցին բնորոշ յարդարանք:

Սեղանի այս գարգարանքը բաղկացած է երկու մասէ՝ կեդրոնի ձուլածե բոլորակէն տարածուող ճաճանչաթերթիկներով կազմուած բուն ճաճանչագլուխէն եւ մանրաքանդակներու համադրութեամբ աշխատուած կոթառ պատուանդանէ: Ներկայացուող օրինակը կը թուի պատկանիլ ճաճանչազարդերու այն դասակարգին, որ կը պահէ իր մէջ կանոնական ընկալեալ ձևերն ու սկզբնական համեմատութիւնները: Վարպետ ոսկերիչը ծանօթ ըլլալով ավանդական ձևերուն, փորձած է ինքնաբոլոր լուծում մը տալ ճաճանչազարդի յարդարանքին. եղածը ուրիշ բան չէ քան ավանդական ձևերն ու անհատական պատկերամտածողութիւնը միաձուլելու փորձ մը, իսկական զուգորդում մը, որ կ'ընդգծէ անոր ինքնատիպութիւնը:

Ամէնէն ուշագրաւ հատուածը բուն ճաճանչագլուխն է, որ կազմուած է ձուլածե բոլորակէն սիւռուող նրբօրէն մշակուած՝ մէջընդմէջ շիտակ սրածայր եւ ալիքաձեւ կտրուածքով արծաթ ճաճանչներէ: Կեդրոնի բոլորակ միջոցը երկու կողմերէն ծածկուած է ճերմակ թափանցիկ ապակիով, սնամէջ պարապետութիւն մը ստեղծելով, որու ներսը կարծէք օդի մէջ գետեղուած է չափազանց նուրբ ոսկի խաչաթեւ մը: Եռալիք՝ կոր ծայրագլուխներով, դրուագման եղանակով աշխատուած խաչի այս յօրինուածքը յատուկ գրաւչութիւն ու խորհրդաւորութիւն հաղորդած է: Խաչին կեդրոնը փոքր բարձրութեան վրայ սրանկիւն փոքր օղամանեակի վրայ ագուցուած ապակիին տակ ամփոփուած է մասունքը՝ ոսկորի բեկոր: Խաչին երեք թեւերուն վրայ նուրբ գուգաթելով հիւսուած օղամանեակի մէջ ագուցուած են փոքր կանաչ քարեր, իսկ խաչաթեւը կազմող չորս անկիւններու միջեւ՝ փոքրիկ մարճաններ: Խաչի ստորին թեւին կը հատուի արծաթէ ձուլածոյ հրեշտակի մանրաքանդակ մը, դարձեալ ապակիի տակ: Կեդրոնի ապակիները երկու կողմէ առնուած են ատամնաւոր շրջանակի մէջ. ուշադրութիւն կը գրաւէ շրջանակը երիզող նուրբ յարդարանքով ծաղկային շքեղ երիզագօտին: Տպաւորիչ է արծաթագոյնի, ոսկեգոյնի եւ գունաւոր քարերու նուրբ համադրութիւնը, խաչը կ'ընդգծէ բազմաշնորհ վարպետին գեղագիտական ճաշակը:

Երկրորդ երեսակողմի յարդարանքը ամբողջովին կը համապատասխանէ արտաքին կողմի յարդարանքին: Կարծես թէ լոյսի հոսանք մը կը ճառագայթէ անկէ:

Ճաճանչազարդին եւ կոթառին միացման տեղը տեղադրուած է հրեշտակի այլ քանդակ մը, որուն մարմինն ու թեւերը աւելի թեւատարած թռչուն կը յիշեցնեն: Անոր ոտքերուն տակ գետեղուած գունդը կը միանայ վերէն վար լայնցող կոր եւ սնամէջ կոթառին, որ պատուանդանի դեր կը կատարէ, եւ որուն վրայ տեղաւորուած է հետեւեալ արձանագրութիւնը. «ՅԻՇԱՍԱԿ Է ՔԻԼԻՍՅԻ ԱԹԱՄ ԿԱՍՊԱՐ ԳԷՈՐԳԻ ՈՐԴԻ ՅԱԿՈՒՃԱՆԻՆ ԵՒ

ԻՒՐԵԱՆՈՑՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ Ի ԴՈՒՌՆ ՍԲ. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԲԵՐԻԱ. ԹՎԻՆ ՌՍԽԱ (1792)»:

Յաւօք արձանագրութեան մէջ յիշատակուած անձնանունները գրեթէ ոչինչ կը յուշեն: Կրնանք կուսակցի, թէ Հալէպ հաստատուած քիլիսցի բարեպաշտ հաւանաբար նաեւ բարեկեցիկ ընտանիքի մը յիշատակն է որ ցարդ կը պահուի նուիրաբերումի նոյն կամարներուն տակ: Յիշատակութիւն չկայ նաեւ մասնատուփի պարունակութեան մասին:

Հին գործի մը տպաւորութիւնը կը թողու ճաճանչի այս օրինակը, որ իրականին մէջ ալ բաւական մաշած է, ճաճանչաթերթիկները տեղ-տեղ ծռւում եւ փրթած են եւ նորոգութեան հետքեր կը նշմարուին: Այնպէս կը թուի որ ան երկար ատեն մաս կազմած է եկեղեցիի խորանները զարդարող հիմնական յարդարանքներուն,

15. Սեղանի զարդախաչ՝ մասունքով

Գեղարուեստական ուրոյն յարդարանք ունեցող Ս. Սեղանի զարդարանքի ընտիր օրինակ մըն է թիւ 449 թուահամարի տակ պահուող զարդախաչը: Պատրաստուած է գուգաթելի, գնդիկազարդման արուեստով, ցորենաձեւ հատիկներու յաւելումներով (երկայնքը՝ 48, լայնքը՝ 22 սմ.): Անիկա արծաթեայ է, ոսկեզօծ, կազմուած երկու մասերէ՝ բուն զարդախաչէն եւ կոթառէն:

Ձարդախաչը կազմուած է լայն տերեւիկներ յիշեցնող գուգաթելի նուրբ բանուածքով սրածայր խաչաթեւերէ: Ուրորուն կորագիծերով ու իրարմէ բխող զարդանախշերով գեղեցկօրէն մշակուած յենքը հարստացած է անկանոն, կարծէք ցիրուցան եղած երկարուկ հատիկներու սքանչելի յաւելումով: Վարպետ ոսկերիչը սակայն չէ բաւականացած յօրինուածքի սկզբնական նուրբ շարժումով, այլ փորձած է գոյնզգոյն քարերու յաւելումներով գեղանկարչական աշխուժութիւն հաղորդել խաչի յարդարանքին: Իւրաքանչիւր թեւին վրայ գետեղուած կեդրոնական կարմիր ուռուցիկ ակերուն չորսբոլորը կանաչ ակերով զարդարելով, ան յաջողած է նմոյշին ընծայել ազնուական շքեղութիւն:

Խաչաթեւը եզրագծող շքեղ գօտին կը վկայէ գայն պատրաստող ոսկերիչ վարպետին հմտութեան ու գեղագիտական բարձր ճաշակին մասին: Միջին չափի կանաչ, կարմիր, վարդագոյն փայլիլուն քարերը գետեղուած են իւրաքանչիւրին համար ստեղծուած բարձրադիր քարէ տուփերու մէջ, որոնք իրարմէ բաժնուած են որորուած գուգաթելի ժապաւէններով, կազմելով շքեղ շրջագօտի մը: Խաչաթեւի կեդրոնը գուգաթելով հիւսուած թեթեւ բարձրութեամբ օղամանեակին մէջ գետեղուած է մասունք պարունակող ապակեպատ տուփիկը, ուր հագիւ կ'ընդնշմարուին գմուռսի հետքերը:

Երկրորդ երեսակողմը ամբողջութեամբ նոյնն է, նոյն օղամանեակի մէջ առնուած խաչաթեւը, ակերու երանգային փոքր տարբերութեամբ: Կեդրոնի հատուածը՝ մասունքի հակառակ կողմը, կ'ամբողջացնէ գուգաթելի ընտիր յենքը, որուն վրայ ագուցուած են նոյն կարմիր-կանաչ ակերը:

Խաչաթեւի ստորին մասը ամրացուած է հարթ եւ ողորկ կոթառը:

Դժբախտաբար հայ աւանդական արծաթագործութեան բնորոշ տարրերով յատկանշուող այս զարդարուն խաչը գուրկ է արձանագրութենէ: Կրնանք անվարան ըսել, որ ան ոճական ընդհանուր գիծերով աւելի կը մօտենայ Հայկական

բնաշխարհի արծաթագործութեան կեդրոններուն, համապատասխանութիւն մը պարզելով Վասպուրականի ոսկերչական արուեստի նմոյշներուն հետ:

16. Մասնախաչ

Փոքր չափի արծաթեայ այս մասնախաչը ուշագրութիւն կը գրաւէ իր գեղեցիկ եւ կատարեալ ուրուագիծերովը (թիւ 336): Խաչն ամբողջութեամբ զուգաթելի եւ հատիկազարդման բաւական բարդ եղանակով իրականացուած ընտիր բանուածք է: Արուեստի հասունութիւն մը կայ այստեղ. հմտութեամբ աճած, լիացած, վարպետ ոսկերիչի մը գործը ըլլալ կը թուի: Որակն ու պատրաստութիւնը նոյն՝ հայկական բնաշխարհի ոսկերչական արուեստին հարազատութիւնը կ'ընդգծեն:

Խաչաթեւի յորինուածքը, սրածայր սլաքներ յիշեցնող՝ խոր կտրուածքներով հիւսկեկներու քառաթեւ մըն է (երկայնքը՝ 13.5, լայնքը՝ 13.5 սմ.): Կեդրոնէն սփռուող խաչին չորս հաւասար ծայրերը կը մօտենան, բայց չեն հանդիպիր ու հպիր իրարու: Աւելի խորունկ ու բարդ հանգուցաւորում մը կայ խաչաթեւերուն խորքերուն միջեւ: Հակառակ անոր, որ խաչաթեւերը կազմող միջոցը պարապ է, սակայն այս բացութիւնները աւելի հարուստ կը դարձնեն անոր ուրուագիծը: Դէպի ներս հակուած ծայրաթեւերուն կտրուածքները իրարու միացած են ազատ տարածութեան մէջ ձգուած քարերով: Քարերու նոյն շքեղ գեղեցումը ունի նաեւ մասունքը եզրագծող օղակը:

Խաչաթեւերուն վրայ համաչափ զուգահեռներով տեղադրուած տարբեր չափի ու ձեւի՝ կլոր, արցունքաձեւ, եւ տարբեր գոյնի քարերը զուարթ տրամադրութիւն մը ընծայած են խաչի պարոքեան վերարտադրութեան: Քարերու գունային դասաւորումը խնամքով կատարուած է՝ կարմիրի, վարդագոյնի, կապտաւուն կանաչի յարափոփոխ համադրութիւն մը կազմելով: Կեդրոնը խոշորկեկ շրջանակը պարագրող ապակիին տակ ամփոփուած է մասունքը: Քարերէն գատ, մակերեսը լեցուած է արծաթ զուգաթել գնդաձաղիկներ յիշեցնող յաւելումներով:

Երկրորդ երեսակողմը կը ներկայացնէ հարթ եւ ողորկ մակերես մը, եզրերը շեղակի սեղմ գծիկներով փորագրութեան յաւելումով: Կեդրոնի քառակուսի շրջագօտիին մէջ համաչափ տառերով փորագրուած է հետեւեալ արձանագրութիւնը. «ՅԻՇԱՏԱԿ Է ՍԲ. ՄԱՍԱՄԲ ԹՈՐՕԵՆՅ ՀԱՐՍ ԷԹԷՐԻՆ ԵՒ ՈՐԴՈՑՆ ԹՈՐՈՍԻՆ ԵՒ ԱՆՆԱԻՆ Ի ԴՈՒՌՆ ՍԲ. ՎԱՌՎԱՌԻԱ ԿՈՒՄԻՆՆ՝ 1287»:

Մասնախաչին Ա. եւ Բ. կողմերը իրարու միացած են զուգաթելի ընտիր մշակումով, ամբողջութիւն մը կազմելով խաչաթեւին հետ: Խաչաթեւի գլխածայրը ամրացուած շղթային կցուած է պզտիկ աննշան խաչ մը՝ Յիսուսի մանրաքանդակով: Շղթային առկայութիւնը կը յուշէ որ ան կախովի մասնախաչ մըն է:

17. Խորանի մեծ խաչ՝ մասունքով

Հարէպի Գանձատան հարուստ հաւաքածոյին մաս կը կազմէ նաեւ Այնթապ պատրաստուած, նախապէս տեղուոյն եկեղեցիներուն պատկանած ծիսական առարկաներու եւ զգեստներու ճոխ հաւաքածոյ մը: Մեր քաղաք բանաւոր տեղեկութիւններուն համաձայն այս առարկաները Հարէպ փոխադ-

րուած են 1920-1921ին այնթապցի հայրենակիցներու կողմէ, եւ յաջորդող տարիներուն նոյն՝ այնթապցի ազգայիններու կողմէ ի պահպանութիւն դրուած են Հայկալի Գանձատան մէջ: Բաւական հարուստ այս հաւաքածոյին մէջ մեր ուշագործիւնը կը գրաւեն խորանի երեք մեծագիր մասնախաչեր (թիւ 202, 203, 204), (երեքն ալ Այնթապի հայութեան կողմէ նուիրուած, ի յիշատակ՝ Ս. Աստուածածին եկեղեցիին), յար եւ նման իրարու՝ չնչին տարբերութիւններով, որոնք ակնյայտօրէն եթէ ոչ նոյն վարպետին, ապա նոյն արհեստանոցին գործերը ըլլալ կը թուին: Մասնախաչերու այս օրինակները իրենց վրայ կը կրեն հայկական արծաթագործութեան բնորոշ տարրերը, մասնաւորաբար՝ սունակածեւ խաչի համամասնութիւնները, պատրաստման եղանակն ու զարդանախչերու հմուտ օգտագործումը, գուգաթելի, հատիկագարդման արուեստի համադրումները, որոնք լաւապէս կը դրսեւորուին Այնթապի հայ վարպետներու գործերուն մէջ: Բնորոշ է, որ Այնթապի վարպետ ոսկերիչները ոչ միայն յաջորդաբար իրենց սերունդներուն փոխանցած են արհեստի գաղտնիքները, այլեւ սերունդէ սերունդ պահպանած են ընտանեկան արհեստի ավանդոյթները:

Այս նմոյշներէն կ'ընտրենք 204 թուահամարը կրող մասնախաչը, որ աչքի կը զարնէ յարդարանքային խնամուած եւ հմուտ մշակումներով, մասնաւորաբար պատուանդանի պատկերազրային փորագրութեամբ եւ իւրայատուկ յիշատակարանով:

Մասնախաչը եռամաս է, կազմուած՝ հաւասարաթեւ խաչէ, բաւական նուրբ աշխատցուած կոթառէ եւ լայնանիստ պատուանդանէ (երկայնքը՝ 50, լայնքը՝ 25 սմ.): Արծաթ, ոսկեգօծ այս զարդախաչը պատրաստուած է գուգաթելի, հատիկագարդման եւ դրուագման արուեստով: Բուն խաչը կազմուած է կեդրոնէն ծաւալող ալեձեւ եռալիք կորուծիւններով, չորս սրածայր խաչաթեւերէ: Այն ամբողջութեամբ հիւսկէն նուրբ բանուածք մըն է, իրականացուած գուգաթելի, հատիկագարդման եւ դրուագման բարձր արուեստով: Նկարչագեղ բարդ յօրինուածքով ցանցկէնահիւս խաչը ձեւաւորուած է բուսական զարդանախչերով՝ իրարմէ բխող, իրարու բացուող շարժուն հանդիսներով, ընդելուզուած գնդիկայեւ յաւելումներով:

Չափազանց նուրբ աշխատցուած է ամբողջ խաչը երիզագծող հիւսկէն ժապաւէնը: Վարպետ ոսկերիչը հիանալի լուծում տուած է խաչաթեւերու միացման չորս անկիւններուն: Խաչին սունակէն ելլող նրբագեղ բանուածքով, փիրուզայեւ, գնդիկագարդ, կտրտուած եզերքներով նշածեւ ելուստները սքանչելի ներդաշնակութիւն մը կը կազմեն խաչի ասեղնագործ մակերեսին հետ, միաժամանակ պտոյտի շարժում մը կը հաղորդեն միջոցին: Խաչի կեդրոնը թեթեւ բարձրութեան վրայ ազուցուած շրջանածեւ ապակիին տակ պարփակուած է մասունքը (փայլաթուղթի մէջ փաթեթուած): Խաչը երիզող նոյն հիւսկէն ժապաւէնը կը կրկնուի մասունքը պարունակող կեդրոնի հատուածին վրայ, շուրջբոլորը՝ մանր կանաչ կարմիր փայլիւն ակեր: Խաչաթեւերը նոյնպէս յարդարուած են միջին չափի բազմագոյն քարերով (նռնաքար, փիրուզ, մարձան): Քարերու դասաւորումը կատարուած է յատուկ մշակմամբ, գունային ներդաշնակութիւն մը կազմելով ամբողջին մէջ:

Երկրորդ երեսը աշխատուած է նոյն հիւսկէն եղանակով, կը կրկնուի նախազարդ յենքը: Ա եւ Բ երեսները իրարու միացած են լայն գուգաթել

Հիւսուածքով երիզագօտիով, այնպէս որ խաչը ամբողջութիւն մը դարձած է: Բ կողմին վրայ կը պակսին զանազան ակերն ու քարերը, կարծես խորհրդաւոր գետին մը ստեղծելով կեդրոնը տեղադրուած խաչուած Յիսուսի փոքր մանրաքանդակին համար: Յիսուսի գլխավերեւը կ'երեւին ժապաւէնաձեւ շրջանակի մէջ փորագրուած՝ Յ[hunus].Ն[ագովրեցի].Ո/Թ[ագաւոր].Հ[րէից]. սկզբնատառերը:

Ոսկերիչ վարպետը հետաքրքրական լուծում տուած է խաչաթեւը շալկող ձողի յարդարանքին: Անիկա կազմուած է իրարու կցուած կոր, գնդաձեւ, երկարուկ գլաններով:

Գեղարուեստական հմուտ մշակումով, իւրայատուկ ձեւի եւ յարդարանքի առումով տարբեր մակարդակ մը ի յայտ կը բերէ պատուանդանը: Առաջին հայեացքով ե՛ւ պատրաստման եղանակի եւ իրարմէ բոլորովին տարբեր ոճային ուղղութիւններու գուգորդում մըն է կատարուածը. շնորհալի վարպետը յաջողած է ոչ միայն երկու տարբեր մակարդակներ իրարու միացնել, այլեւ հանդիսաւոր կերպարանք մը տալ խաչի կերտուածքին: Իսկապէս ալ փառաւոր, լայնանիստ պատուանդանը առանձնայատուկ շքեղութեամբ օժտած է խաչը: Բրգաձեւ՝ վարը լայն փուռածքով դէպի վեր աստիճանաբար նեղցող պատուանդանը միաժամանակ իբրեւ մակերես ծառայած է ընդարձակ արձանագրութեան համար: Այստեղ ակնյայտ է վարպետ ոսկերիչին ստեղծագործական թափը. գայն յարդարող վարպետը չէ բաւականացած ծրագրուած մասնախաչի վերաբերեալ արձանագրութեան տողերը փորագրելով, այլ կերտած է պատկերագրական շղթայագօտիներու հոյակապ մշակում մը: Պատուանդանը վերէն վար ակօսող եօթ շարք բոլորաձեւ սանդուխներ յիշեցնող զարդագօտիներով լեցուած է միջոցը, անոնց միջեւ հիանալի փորագրումով մը տրուած է արձանագրութիւնը: Շարքերէն ոչ մէկը կը կրկնուի. անոնցմէ իւրաքանչիւրը արտաքին գծային փորագրութեամբ կը ներկայացնէ բուսական (զանազան տերեւներ, ծաղիկներ), կենդանական (առիւծ, արծիւ), ինչպէս նաեւ քրիստոնէական խորհրդանիշեր (լուսին, արեւ) պատկերող զարդագօտիներ: Կ'ընդունւարուին նաեւ կրկնուող, իրար ընդերուզուած «ԱՍՍ» յիշեցնող սկզբնատառեր, հաւանաբար՝ վարպետի անուան սկզբնատառերը:

Արձանագրութեան կը պարզուի որ մասունքարանը կը պարունակէ միաժամանակ քանի մը սուրբերու եւ սրբութիւններու վերաբերող մասունքներ, ինչպէս՝ «Կենաց Փայտ»<sup>3</sup>, Սբ. Կարապետի<sup>4</sup>, Երմոգինէ վկայի<sup>5</sup>, Պանթալէոն վկայի<sup>6</sup>, Ս. Գէորգ Զօրավարի<sup>7</sup>, Նոյեան Տապանի<sup>8</sup> եւն.: Յիշատակարանին մէջ մասնաւորապէս նշուած է որ Կենաց Փայտի մասունքը եկեղեցիին նուիրաբերած է Այնթապու առաջնորդ Յակոբ Մայրապետին Վարդապետը: Արձանագրութեան համաձայն, սրբազան այլ մասունքներ եւս ամփոփուած են այստեղ, որոնց ծագումը անյայտ մնացած է, քանզի մինչ մասնախաչը կը պատրաստուէր գանոնք ընծայող հոգեւոր հայրը վախճանած է:

«Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ԿԻՐԱԿՈՍ ՄԵԾ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆՍՑՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՆ ԿԻԼԻԿԻՈՅ Ի ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՅԱՅՍՍ ՔԱՂԱՔԻՍ ՈՐ Է ԱՆԹՎՈՒԻ ԿՈՒՏԻՆԱՅԻ ՏԵԱՌՆ ՅԱԿՈՒԲԱՅ ՀԱՆՃԱՐԵՂ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՒ Ի ՆՈՐԻՆ ՏՆՈՐԻՆՈՒԹԵԱՍԲ ԵՒ ՋԱՆԱՅՑՈՂՈՒԹԵԱՍԲ ԵՒ ԱՐԴԵԱՍԲ ՀԱՄԱՅՆ ՈՐՀՆԵԱԼ ԺՈՂՈՎՐԴՈՅ ՅԵՂԻՆ ՅԻՇԱՏԱԿ ԱՅՍ ՄԲ. ԽԱՉՍ Ի

ԴՐՈՒՆՍ ՍՐԲՈՅ ԵԿԵՂԵՑՈՅՍ ՈՐ Է ՍԲ. ԱՍՏՈՒԾԱԾՆԱՅ ՅԻՇԱՏԱԿ ԵՆ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ՍԲ. ՍԵՂԱՆԻ ՍԲ. ՄԱՍԱՆՑ ՄԱՍԱՆՑՆ ՈՐՔ ԵՆ ԱՍՈՔԻՆ ՆԱԽ ԿԵՆԱՅ ՓԱՅՏԻ ՄԱՍՆ ՊԱՐԳԵԻԵՅ ԵՒ ԱՌ ՍԲ. ԵԿԵՂԵՑԻՆ Ի ՎԵՐՈՅ ՅԻՇԵԱԼԴԷՏԷՆ Բ. ԿԱՆ ՍԲՅ. ԿԱՐԱՊԵՏՈՒ ՍԲ. ՅԵՐՍԵԳԻՆԻՆ ՎԿԱՅԻ ՄԱՍՆ ՊԱՆԴԵԼԷՈՆԻ ԲԺՇԿԻՆ ՍԲՅ. ԳԷՈՐԳԱՅ ՉՕՐԱԲԱՐԻՆ ԵՒ ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆԻ ՓԱՅՏ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ԵՒՍ ԿԱՆ ԱՅԼ ՍՐԲՈՅ ՄԱՍՈՒՆՍ ԱՅՆՅԱՅՏ ԱՆՈՒԱՍ ՁԻ ՈՉ ԳԻՏԵՐ ՈՒՍՏԻ Է ԱՆՑ Ի ՁԵՌՍ ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ Է»:

18. Ճաճանչով խաչ

Գեղարուեստական ուրոյն յարդարանք ունեցող մասնախաչի օրինակ մըն է 1789ին Հայկազ պատրաստուած (թիւ 1) ճաճանչով խաչը, որ գեղազարդման համակարգի եւ օգտագործուած նիւթերու համադրութեամբ բոլորովին նոր ուղղութիւն մը ի յայտ կը բերէ: Արծաթեայ, փայտի եւ կաշուէ յաւելումներով ձուլման եւ դրուագման արուեստով շինուած ճաճանչի այս օրինակը կը ներկայացնէ Հայկազի արծաթագործութեան բնորոշ գիծ մը: Գանձատան մէջ կը ցուցադրուին քանի մը նման յօրինուածքներ, որոնք պատրաստուած են Հայկազի մէջ յատկապէս տեղուոյն եկեղեցիներուն ընծայաբերելու նպատակով: Ասոնք տարբեր չափի եւ ձևի ճաճանչախաչեր, հրեշտակներ են, սակայն ունին միանման յօրինուածք՝ պատրաստուած են դրուագման եւ փայտի ու կաշուի վրայ երեսապատման եղանակով: Ներկայացուող ճաճանչախաչը ընդհանուրին մէջ կ'առանձնանայ ոչ միայն իր ծաւալով, այլեւ խորհրդաւոր վերարտադրութեամբ:

Ընդհանուր յարդարանքին մաս կը կազմեն կեդրոնական սիւնին վրայ բարձրացած արծաթ բոլորածեւ ճաճանչախաչը, իսկ վարը՝ սիւնին աջ եւ ձախ կողմերը, կ'երեւին հրեշտակներ, այս հանդիսաւոր ուրուանկարը կ'ամբողջանայ գինք պարագրող կամարածեւ խոշոր շրջանակով, որ խորունկ ու բարդ ծաւալ տուած է յօրինուածքին: Փայտէ պատուանդանը ամբօրէն երեսապատուած է սեւ կաշիէ մակերեսով, որուն վրայ, գուգահեռ մակարդակներու վրայ կառուցուած է յօրինուածքը: Բարակ, շատ նուրբ արծաթէ թերթի վրայ դրուագուած պատկերները կտրտուած նրբագիծերով փակցուած են պզտիկ, գրեթէ անտեսանելի գամերով: Առանձնայատուկ գրաւչութիւն կը ներկայացնեն քիչ մը յուշարձանային երկու կողմերէն դէպի սիւնը հակած եւ մէկ ձեռքով սիւնին ծայրամասը բռնած զոյգ հրեշտակները: Վարպետը կրցած է խորհրդաւոր պատկեր մը ստեղծել, կարծէք դրուագին մէջ խտացուցած ըլլայ խաչի խորհուրդը: Հրեշտակները երկուքն ալ ունին շատ նուրբ շարժում, նոյն կորութիւնը՝ ուսերէն աճած փետրաւոր թեւերուն, շեղակի երեք քառորդով գլխիկներու վրայ լիացած լուսապսակներուն, հագուստներու ծալքերուն:

Երկու կերպարներուն միջեւ հանգչած է պրոնզեայ շքեղ թաղար մը, որմէ կը տարածուի եւ հետզհետէ ծաւալ կը ստանայ ծաղկային շքեղ արապեսքը՝ ծաղիկներ, տերեւներ, բաղեղի ոլորուն, դէպի վեր հակող ճիւղեր, այս ամէնը՝ ներքին կտրուածքներով արտայատուած: Վարը՝ ծաղկամանին տակ, պատուանդանի հարթ եւ ողորկ մակերեսը կը պարփակեն կրկնակ արձանագրութիւնները:

Վերը՝ հրեշտակներու ձեռքերուն վրայ բարձրացած բոլորաձեւ սիւնը, կը ստեղծէ լաճն միջոց մը. վարպետին ձգտումն է ասիկա՝ մեկուսի առանձին դիրքով ընդգծել սիւնին վրայ բարձրացուած ճաճանչին սքանչելի վեհուածութիւնը:

Միջոցը կը կտրէ սիւնին վերի մասին հանգչող բոլորկեկ գունդ մը՝ պատուանդանը, որուն վրայի ձուլածոյ թեւատարած թռչնակերպ հրեշտակի քանդակը, որ կը փորձէ երկու կէտի բացող պարապը կարծել: Բարձրասլաց սիւնին վրայ՝ կը հանգչի կլոր շրջագիծով սրածայր ալեձեւ նուրբ թերթիկներով լիացած ճաճանչապսակը որ կարծես կը գրաւէ ընդարձակ դատարկութիւնը՝ հանդիսաւոր ճառագում մը սփռելով իր շուրջ:

Շատ սիրուն մշակում ունի ճաճանչապսակի կեդրոնի օղակաձեւ յօրինուածքը. ծաղկային լաճն շրջանակը արեւածաղիկի պատրանք կը ստեղծէ. միջոցը դատարկ է. բոլորակի խորութեան մէջ գետեղուած է ուղիղ գիծերով հաւասարաթեւ, սնամէջ, խորհրդաւոր, հին սեւցած խաչ մը, որ օդին մէջ ըլլալ կը թուի: Խաչաթեւերուն անկիւններուն վրայ մանր փիրուզէ ակեր կան: Խաչին խոռոչը ճաքճքած բնանիւթով մը ծածկուած է, անցեալի խաւ մը մնացեր է, հաւանաբար պաշտպանելով մասունքի հետքերը: Այս խորութեան վրայ՝ խաչեալ Քրիստոսոսի ձուլածոյ մանրաքանդակը գետեղուած է, անյաջող, անդէմ: Հետաքրքրական շեղում մը ի յայտ կը բերէ առաջին հայեացքով աննշան թուացող այս դրուագը. կանոնիկ պատկերագրութեան մէջ ընդհանրապէս Յիսուսի ոտքերուն տակ կ'ըլլայ կմախքի խորհրդանշը, այստեղ՝ գլխուն վերեւն է այդ:

Ամէնէն իւրայատուկ, արտասովոր հատուածը՝ պատուանդանին երկու կողմէն դէպի վեր բարձրացող գոգաւոր լաճն շրջանակն է: Ճաճանչազարդը շրջապատող կորագիծ այս կամարը յարդարուած է արծաթի բարակ շերտով, դրուագուած՝ դարձեալ ճաճանչներ յիշեցնող զարդանախշերով: Արտասովորը՝ անոր առանձին, կարծես քիչ մը անջատ դիրքն է. հակառակ ասոր, դրուագը տարածութեան մէջ կը տպաւորէ ձեւերու եւ գիծերու ամբողջութեամբ ընդհանուր յօրինուածքը յաջող համագրում մըն է, ուր ի յայտ կու գան զայն ստեղծող վարպետին ստեղծագործական միտքն ու վառ երեւակայութիւնը: Կամարի գագաթին կայ Ս. Հոգին խորհրդանշող գլուխը դէպի վար իջած՝ թեւատարած աղաւնիի գեղեցիկ մանրաքանդակը, որ յաւելեալ խորհրդաւորութիւն տուած է յօրինուածքին:

Հետաքրքրական իրողութիւն է, որ մինչեւ օրս, ամէն տարի Խաչի տօնին յատկապէս այս ճաճանչախաչը դուրս հանուելով խաչը կը փառաւորուի: Հին աւանդութեան համաձայն խաչը կը զարդարուի ձիթենիի ոստերով եւ ծաղիկներով եւ ժողովուրդը թափօր կը դառնայ, օրհնութիւն եւ աղօթք կը կատարուի: Ճաճանչազարդ ունի զոյգ արձանագրութիւններ.

ա. «ՅԻՇԱՏԱԿ Է ԽԱՉՍ ԱՐԵԻԵԼՏԻ ՈՍԿԱՆԻ ՈՐԴՈՒՆ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՄԻՆԱՍԻՆ ԵՒ ԾՆՕՂԻՆ ԵՂԻՍԱԲԵԹԻՆ Ի ԴՈՒՌՆ ՍԲ. ՔԱՌԱՄՆԻՑ ՍԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՒՆ /1789/»:

բ. «ՅԻՇԵԱՅ ՀԱՅՐ ԵՐԿՆԱԲՈՐ ՎԱՍՆ ՈՐԴՈՅ ՔՈ ՍԲ ՉԱՐՉԱՐԱՆԱՅՆ ԸԶՀՈԳԻ ԾԱՌԱՅԻ ՅԻՇԱՏԱԿ ՏՎՈՂՍ ԶՈՒՂԱՅԵՏԻ Խ.Պ. ԵՒ ԻՐ ԱՄԵՆԱՅՆ ԿԵՆԹԱՆԱՅՆ ԵՒ ՆՆՁԵՑԵԼՈՅՆ Ի ԴՈՒՌՆ ՍԲ. Խ.[ՔԱՌԱՄՆԻՑ] ՍԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՒՆ 1789»:

**ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

- <sup>1</sup> Իբրևե շարունակութիւն նախորդ յօդուածի (Վարդի Քէշիշեան, «Հալէպի Գանձատան Սրբազան Մասունքներն Ու Մասնատուփերը», Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. Լ, 2010, էջ 567-592) այստեղ կը ներկայացնենք Հալէպի Գանձատան մասանց պահպաններու խումբ մը, որոնք իրենց գեղարուեստական արժանիքներով կը միանան հայ եկեղեցական մշակոյթի հարուստ ժառանգութեան:
- <sup>2</sup> Վառվառէ կոյս: Պափղագոնիոյ Հելլոպոլիս քաղաքէն. քրիստոնէական հաւատքին համար դատապարտուած էր գլխատումի: Քրիստոնէաներու հայածանքներու դադարուածն յետոյ, Վառվառա կոյսը Կոստանդիանոս կայսրի օրով մեծ ժողովրդակալութիւն կը ստանայ Արեւելքի եւ Արեւմուտքի մէջ հաւասարապէս եւ իր մասունքները կը տարածուին ամէնուրեք:  
Մեզի ծանօթ աղբիւրներու մէջ չենք հանդիպիր Վառվառէ կոյսի մասանց յիշատակութեան: Սրբուհիին մատուռ-եկեղեցին գտնուած է Կարինի մօտերը, նշխարները հոն թաղուած ըլլալով ժողովուրդին կողմէ կոչուած է Սրբուհի Վառվառէի գերեզման:  
Կարելի է ենթադրել, որ այս մասնախաչն ալ Հալէպ բերուած ըլլայ Կարինէն կամ անոր մօտ վայրէ մը, թէեւ այդ հաստատող որեւէ փաստ չունինք: Աշխատանքին նրբութիւնն ու ոճական առանձնայատկութիւնները, ինչպէս նաեւ շրջանին բնորոշ տարրերը խորհիլ կու տան թէ ան ստեղծուած է հայ արձաթագործութեան զարգացած կեդրոնի մը մէջ, հաւանաբար՝ Կարին, Երզնկա եւն.:
- <sup>3</sup> «Կենաց Փայտ»: Քրիստոսի խաչելութեանը ծառայած խաչի փայտէն մանր կտոր կամ փշուր (նաեւ «Նաչափայտ Յիսուսի», «Սբ. Խաչ», «Փայտ կենաց» կամ «Սբ. Նշան»): Ընդհանրապէս գետեղուած կ'ըլլայ յատուկ զարդարուած ու ճաճանչաւոր անօթի մը մէջ, վարէն բունելու կոթառ-պատուանդան ունի, որ սեղաններու վրայ կը դրուի որպէս հաւատացեալներու յարգանքի նշան եւ որոշեալ օրերու կամ բարեպաշտներու ցանկութեամբ անով խաչահանգիստ կամ խաչալուսայ կը կատարուի, օրհնուած ջուր կը պատրաստուի հիւանդներու բժշկութեան, տուններու շինութեան, կամ ձեռնարկումներու յաջողութեան համար: Հայկական գաւառներու գրեթէ բոլոր գլխաւոր եկեղեցիներն ու վանքերը ունեցած են խաչափայտ:
- <sup>4</sup> Ս. Կարապետի մասունքները պահուած են Մշոյ Հռչակաւոր Սբ. Կարապետի կամ Գրակայ կամ Իննակնեան վանքին մէջ: Աւանդութեան համաձայն Ս. Գրիգոր Լուսաւորիչ հեթանոսական մեհեանները կործանելով նոյն տեղը շինած է եկեղեցի եւ վանք՝ եւ հոն ամփոփած է Ս. Կարապետի նշխարները, այդ պատճառով ժողովուրդը գայն կոչած է Ս. Կարապետու գերեզման: Դարեր շարունակ Ս. Կարապետի վանքը եղած է հայ ժողովուրդի ամէնէն սիրելի ուխտատեղիներէն մին: Ս. Կարապետի մասունքներ գտնուած են նաեւ Կեսարիոյ Ս. Կարապետի վանքին, Յովհաննավանքի, Գանձասարի վանքի, Հալուորիկի, Հաւուց Թառի, Ս. Էջմիածինի եւ շատ այլ վանքերու ու եկեղեցիներու մէջ:
- <sup>5</sup> Երմոգինէ վկայ: Եղած է գիտուն եւ ճարտասան ծնունդով ամենացի Մեծն Մինասին ուսումնակից ընկերը, որ Դիոկղետիանոս կայսեր կողմէ զրկուած էր Աղեքսանդրիա տեղական խռովութիւնը ճնշելու: Տարի մը Եգիպտոս մնալէ ետք, Մինաս հրապարակաւ կը յայտարարէ իր քրիստոնէութիւնը եւ իր իմաստնութեամբ ու բարեգործութիւններով համընդհանուր ուշադրութեան առարկայ կը դառնայ: Կայսրը այս լսելով Աղեքսանդրիա կը զրկէ Երմոգինէսը, որ ոճրագատ ատենանի առջեւ կը կանչէ Մինասը, բայց յաղթուելով անոր պատասխաններէն կտրել կու տայ անոր լեզուն եւ փորել՝ աչքերը: Սակայն, երբ կը տեսնէ անոր բժշկութեան հրաշքը ինք ալ կ'ընդունի քրիստոնէութիւնը եւ Աղեքսանդրիոյ պատրիարքէն եպիսկոպոս ձեռնադրուելով կը սկսի Աւետարանը քարոզել: Այն ատեն կայսրը անձամբ Եգիպտոս կու գայ եւ դատելով նորանոր չարչարանքներու կ'ենթարկէ Մինասն ու Երմոգինէսը, որոնք դարձեալ

հրաշքով կը բժշկուին: Շարունակելով իր անգթութիւնները, կայսրը ի վերջոյ գլխատել կու տայ Մինասն ու Երմոզինէսը:

Հայ եկեղեցին այս վկայից յիշատակի օրը կը նշէ Սբ. Յակոբայ պահոց Երեքշաբթին: Աղբիւրներու համաձայն Սբ. Երմոզինէի մասունքէն կը պահուի էջմիածինի վանքին մէջ:

<sup>6</sup> Պանթալէոն վկայ (բժիշկ): Պանթալէոն Նիկոմիդացի. մատաղ հասակէն հետեւած էր բժշկական ուսման: Շուտով ուշադրութիւնը գրաւած է Երմոզայոս քահանային, որ Երկու Բիւրքէն ազատուածներէն էր եւ կը մնար թաքստոցին մէջ: Անոր ազդեցութեամբ Ֆրիգիական բժշկութեան արհեստը թողնելով հոգեւոր բժշկութեան կոչումը կը գգայ իր մէջ: Հիւանդներ բժշկած է աղօթքով ու Յիսուսի անունով: Աւանդութեան համաձայն, երբ Մաքարիանոս կայսրը կը հրամայէ գլխատել Պանթալէոնը, փոխան արիւնի կաթ կը յորդի անոր պարանոցէն: Հրաման կը տրուի որ այրեն նահատակին մարմինը, բայց քրիստոնեաներն արդէն փութացեր էին վերցնել եւ պահել անոր մարմինը: Իր կատարած բժշկութիւններուն համար կոչուած է Սբ. Պանթալէոն բժիշկ: Իր մասունքները գտնուած են Ս. էջմիածինի վանքին, Չարեքայ վանքին եւ Սբ. Նշանի վանքին (Սեբաստիա) մէջ:

<sup>7</sup> Ս. Գէորգ Զօրավար, Գ.-Դ. դարերու վկայ, Հայ Առաքելական Եկեղեցիի տօնելի սուրբերէն: Հասակ առած է քրիստոնեայ ընտանիքի մէջ: Զինուորագրուելով, իր անօրինակ արիւթեան եւ իմաստութեան շնորհիւ հռոմէացի Դիոկղետիանոս կայսրի օրօք (284-305) հասած է զօրավարի աստիճանի: Երբ սկսած են քրիստոնեաներու դէմ հալածանքները, Գէորգ պատուած է քաղաքին հրապարակին մէջ կախուած ընդդէմ քրիստոնէութեան արքունական հրովարտակը: Այդ արարքին համար, ենթարկուած է քրիչարանքներու, սակայն ոչ միայն չէ ուրացած հաւատքը, այլեւ Տէրունական խօսքով քաջալերած հայրենակիցները՝ կոչելով չվախնալ անոնցմէ, ովքեր ի զօրու են մարմինը մեռցնել, բայց ո՛չ հոգին:

Բազմաթիւ աւանդութիւններ հիւսուած են Ս. Գէորգի մասին, որոնցմէ մէկուն համաձայն ան վիշապն սպաննելով, ազատած է կոյս մը: Ընդհանրապէս ընկալուած է իբրեւ վիշապասպան սուրբ:

Ս. Գէորգի անունով եկեղեցիներ ունին ե՛ւ հայերը ե՛ւ եւրոպացիք: Հայ եկեղեցին անոր յիշատակը կը տօնէ խաչվերացի երկրորդ Կիրակին յաջորդող Շաբաթ օրը:

Ս. Գէորգ Զօրավարի մասունքներ պահպանուած են Հայաստանի բազմաթիւ եկեղեցիներու եւ վանքներու մէջ, տրուած ըլլալով, որ Ս. Գէորգ ամէնէն ժողովրդական սուրբերէն մէկն է: Անոր մասունքները գտնուած են իր յիշատակին կառուցուած վանքերու եւ եկեղեցիներու, ինչպէս նաեւ զանազան սուրբերու անունը կրող սրբարաններու մէջ: Յայտնի են՝ Մուղնիի Ս. Գէորգ, Գոմաց կամ Տատրակաբնակ Ս. Աստուածածնի (Վան-Վասպուրական), Լիմ Անապատի Ս. Գէորգ, Ս. էջմիածնի, Ղուլէ Ս. Գէորգ (Պարբերդ), Զոջլուի Ս. Գէորգ Վանք (Վան-Վասպուրական) եւ այլ վանքերու մէջ պահուող Ս. Գէորգի մասունքները: Ուշագրաւ է, որ ԺԷ. դարուն Հալէպի մէջ նոյնպէս, հայ մարդը պահպանելով հայրենի երկրին դարաւոր ավանդութիւնը, փորձած է նոր բնակավայրին մէջ ստեղծել հաւատքի եւ պաշտամունքի այն հարազատ միջավայրը, որ պիտի ըլլար իր հաւատքի ապաւէնը: Ասոր վառ օրինակներէն մէկը կը հանդիսանայ Ս. Գէորգի մասունքը պարունակող մասնախաչը:

<sup>8</sup> Նոյեան Տապան: Նոյեան Տապանի փայտի բեկոր եւ կամ «Տախտակն սուրբ տապանին Նոյեայ Նահապետին»: Այս մասունքէն կը գտնուէր Այրիվանք կամ Գեղարդայ վանք, Սբ. Նշանի վանք (Սեբաստիա), Կապուտկողի Ս. Յակոբի վանք (Վասպուրական) մէջ:

<sup>9</sup> Կիրակոս Ա. Աջապահեան Կիլիկիոյ Մեծագործ կաթողիկոս, 1797-1822:

---

THE SACRED RELICS AND SACRED BOXES OF  
THE ZAREHIAN TREASURE HOUSE OF ALEPPO (B)  
(Summary)

VARTY KESHISHIAN

This is part two of an article the author published in the previous volume of the Haigazian Armenological Review. It sheds light on five cross relics preserved in the Zarehian Treasure House (Zarehian Kantsadoun) of Aleppo.

Keshishian assesses the historical, ecclesiastical and cultural value of these items in the context of the history of the Armenians of Aleppo, the Christian conceptualisation of saints and sanctity, and the reverence and worshipping of these sacred relics that exists among Christians.

The items described are crosses of different shapes which decorate the altar. Keshishian details their inscriptions and motifs and traces their origins.

These items present different schools and styles of Armenian silversmithing and include remarkable samples that extend from the 18<sup>th</sup> to 20<sup>th</sup> century. Some of the items were produced in Aleppo; others were salvaged by the Armenian deportees of Aintab and constitute a precious part of the Zarehian Treasure House collection.